

# ՄԷՐ ՄԱՌԻՍՅԷ

## ՀԱՅԿԱՅԷ

### ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ

ԹԵՐԹԸ 40 ՓԱՐԱՅ

#### ՏԵՂԱԿԱՆ

ՔՐԻՍՏ. ՋԻՆԻՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Անցեալ շաբթու սոյն խնդրոյ վրայ Սթամպուլի մեր ազգին նկատմամբ գրած չարամիտ և թշնամական յօդուածոյն պատասխաններուս առթիւր, քսած էինք թէ մեր ազգային վարչութիւնը, իբրեւ միջնորդ ընդ մէջ տէրութեան եւ ազգին, և գիտակ իր ունեցած պատասխանատուութեանը, գովութեան արժանի խոհեմ ըզգուշաւորութեամբ մը կ'ըջարժէր, որպէս զի մի' գուցէ հապճէպով ու աճապարանօք տեսնելով գործը, թէ՛ տէրութեան և թէ՛ ազգին սխալ հասկացողութիւն պատճառելու առիթ մը տուած չլլայ, ինչպէս եղաւ Յունաց մէջ:

Մեր այս կարծիքը լիովին կ'հաստատէ այս անգամ Յունաց Նէօլոօս լրագիրը, վերջերս մէկ քանի յոյն եկեղեցեաց մէջ ելած ցոյցերուն առթիւր գրած իր մէկ յօդուածովը, եղած անտեղութեանց պատասխանատուութիւնը յոյն եկեղեցական իշխանութեան վրայ ձեռքերով, որ իւր պաշտօնին ներքին խոհեմութեան համաձայն չը շարժելով, ժողովրդին թիւրիմացմանը առիթ տուած էր:

Սոյն յօդուածը կարծէ որ իւր ամբողջութեամբ մեր ընթացողաց ալ ներկայացնեմք, որ ոչ նուազ ուշադրութեան արժանի է:

«Քրիստոնէից զինուորագրութեանը վերաբերեալ յունաց պատրիարքի չըջարեականին վրայ խօսելով տաճիկ թերթերէն, կ'ընեն ցոյց տալ թէ, կըսեն, տարածուած այն զրոյցները՝ որպէս թէ զինուորեալ քրիստոնեայք պատերազմի դաշտը պիտի զրկուին, պարզապէս երկրին թշնամեացը հնարած

լուրերն են: Տաճիկ թերթերը կ'ընեն թէ այս զինուորագրութեան նպատակն ուրիշ բան չէ՝ բայց եթէ օգուտ կայսրութեան բոլոր ժողովրդոց ալ հաւասարութեան սկզբանց իրականացումը, Այս տեսութեամբ մեր տաճիկ պաշտօնակիցներն կ'որդորեն ողջամիտ քրիստոնեայներն որ իրենց կրօնակիցներէն այս ճշմարտութեանը վերահասու ընեն ու համոզեն որ եւս կենան այն տեսակ ցոյցեր ընելէ, որք տեղի ունեցան Այս կիրակի օր քանի մը յոյն եկեղեցեաց մէջ, պատրիարքական կոնդակին ընթերցման ատենը:

Տաճիկ թերթերուն այս իրաւացի գիտողութիւնները հարկ կ'ընէ մեր վրայ քանի մը բացատրութիւններ տալ, որպէս զի մեր տաճիկ հայրենակցաց ինչպէս նաեւ օտարազգեաց մէջ ալ սխալ հասկացողութիւն մը մուտ չգտնէ, այս խնդրոյ մասին յոյն ժողովրդեան ճշմարիտ զգացմանցը նկատմամբ:

Նախ քան զամենայն քրիստոնեայք եղան որ ասկէ տասը տարի առաջ՝ իրենց ալ զինուորական ծառայութեան մէջ առնուելը խնդրեցին, որոյ կ'ըկայ են այն ժամանակի տեղւոյս քրիստոնեայ թերթերը: Քանիցս այս խնդիրն յուզեցին, քրիստոնէից զինուորագրութիւնը՝ հաւասարութեան առաջին հիմունքը նկատելով, Այսօր սա միայն գիտել կ'տամք թէ մեր այն ատենի տաճիկ պաշտօնակիցները սուտ խուլ ձեւանալով, քրիստոնեայ թերթերուն սոյն գրուածներուն ամենափոքր կարեւորութիւն մ'անգամ չը տուին:

Երբ այս վերջին օրերս կայս. կառավարութիւնը քրիստոնեայներն ալ քաղաքային զօրաց բանակին մէջ ընդունել պարունակող հրամանագիրն հը-

րատարակեց, մասնաւոր և պաշտօնական բնաւ ձայն մը, բողոք մը չլսուեցաւ այդ որոշմանը դէմ: Ընդ հակառակն ամեն ոք այդ որոշումը կատարելապէս արդար նկատեց, այն համոզմամբ թէ իրենց կրօնական իշխանութիւնը պիտի համաձայնէր վերջնապէս կայս. կառավարութեան հետ՝ որ սա ևս յօժարամիտ ըլլալ կ'ընէր այդ որոշման գործադրութեանը եղանակին վրայ, որով պիտի ապահովուէր զինուորական ծառայութեան մէջ քրիստոնէից և տաճիկաց կատարեալ հաւասարութիւնը:

Այս կարգադրութեանու համաձայնութեան նիւթը պիտի ըլլար քրիստոնեայ քաղաքային զօրաց թուոյն համեմատութեամբ որոշեալ սպայից թիւը, զինավարժութեան յատկանալիք օրերը, որպէս զի իրենց օրական աշխատութեամբն ապրող մարդիկ իրենց ապրուստէն չըրկուին, զօրանոցի հասարակային կենակցութեան չվարժուող ժողովրդի մը կրօնական խղճին և պարտուց կատարմանը հոգ տանել, և վերջապէս յատուկ դրօշակի խնդիրը, որ պիտի ցոյց տար քրիստոնէից թէ կառավարութիւնը կ'արգէ իրենց ալ կրօնական զգացումը՝ ճիշդ ինչպէս կ'արգէ տաճիկացը որք ի վեր կ'հանեն կրօնական զգացումն զուրանէն ասացուածներ գրելով իրենց դրօշակացը վրայ:

Քրիստոնեայք, որք ուրախացան քրիստոնեայ զինուորագրութեան սկզբունքը իրենց պատրիարքաւանէն ընդունուելուն վրայ, ժամ մ'առաջ սոյն իրաւանց մասնակցութեանը մէջ առնուելուն կ'օպասէին անհամբեր, բայց վերոյիշեալ երաշխաւորութեանց պայմաններովը, զորս իբր անհրաժեշտ կ'համարէին իրաւամբ:

Քրիստոնէից համար գլխաւորաբար մեծ խնդիրը՝ իրենց պատերազմի դաշտը զրկուիլը չէր, թէպէտ և դարէ հետէ քրիստոնեայք իրենց հայրենիքը պաշտպանելու մեծ պատուէն զրկեալ մնացած են, իսկ քանիցս փորձով ցոյց տուած են թէ իրենք ալ երկրին միւս ժողովուրդներուն չափ ոչ վախկոտ են և ոչ վատասիրտ: Այլ զիրենք զբաղեցնող գլխաւոր խնդիրն էր վերոյիշեալ երաշխաւորութեանց պայմաններն, եկեղեցական իշխանութեան պարտքն էր հոգ տանել այդ մասին, յոյն ժողովրդին ճշմարիտ զգացմանցը հաւատարիմ թարգմանն ըլլալ առ կառավարութիւնն, ինչպէս նաեւ քաղաքային իշխանութեան ալ վերջնական որոշմանց թարգմանն ըլլալ առ ժողովուրդն:

Եկեղեցական իշխանութիւնը, սոսկապէս յոյն ժողովրդոց՝ իրենց ալ քաղաքային զօրաց բանակին մէջ ընդունելութեան սկզբունքը ծանուցանելու՝ զոր արդէն գիտէին ասոնք և յօժարակամ ընդունած էին և կայս. իրատէին իմաստը բացատրելու տեղ՝ որ արդէն բացայայտ և որոշ էր, փոխանակ այսպէս ընելու՝ կըսեմք, պատրիարքարանը ամենէն առաջ սա բացատրութիւնը պէտք էր տալ իր ժողովրդին թէ այդ զինուորագրութիւնը ինչ եղանակաւ ու ինչ պայմաններու մէջ պիտի գործադրուի: Այսօր քրիստոնեայք վրայ բոլորովին անտեղեակ մնալով կ'վարանի, այլ ընդ այլոյ կարծեաց կ'մատնուի, կ'աւարակուի, և վերջապէս սքալալ հասկացողութեանց ու չարամիտ խօսքերու հաւատարու կ'առաջնորդուի:

Ահա ասկէ ծագեցան այս կիրակի օր տեղի ունեցած քա-

նիւթ մասնաւոր ցոյցերն ու տըժ-  
գոհութիւնները : Այդ տժգո-  
հութիւնը - խառնաբար կըսեմք  
թէ - բնաւ ոչ կայս : Կառավա-  
րութեան և ոչ ալ այդ որոշ-  
մանն սկզբունք դէմ էր : այլ  
մեր յայն եկեղեցական իշխա-  
նութեանը դէմ էր այդ արտառն-  
ջը , որ համաձայնութեամբ չէր  
ուզած կարգադրել այդ որոշ-  
մանն գործադրութեան միջոց-  
ներն ու եղանակը : ոչ ալ այդ-  
մասին տեղեկութիւն մը կ'տար  
իր ժողովրդոցը :

Հարկ չկար որ եկեղեցա-  
կան իշխանութիւնը կամք կամ  
վճիռ յայտնէր այդ որոշումն  
ըստ սկզբան ընդունուած ըւ-  
լայուն կամ չըլլայուն վրայ , այլ  
պարտաւոր էր դորա գործադ-  
րութեան միջոցները կարգադ-  
րել : Ասի իւր պարտքն էր թէ՛  
տէրութեան և թէ՛ ազգին առ-  
ջին :

Առ այս ապացոյց ունիմք  
վերջին օրերս հայերէն թերթ-  
եր գաղտնիորդ Տպագր. Տես-  
չութեան հրամանագրին մէջի  
մէկ հատուածը , որ կըսէ  
թէ «... մինչդեռ Հայոց Պատ-  
արարքը տակաւին վերջնական  
կարծիքը չէ՛ յայտնած սոյն  
որոշմանը բռնաբարութեան  
վրայ , այդ հայերէն թերթը  
«... և չի» :

Այս խօսքը կ'հաստատէ թէ  
այդ բանն էր մինակ Պատրի-  
արքներէն կառավարութեան  
սպասածը , ուստի ցաւելով կը  
հարկադրուեմք ըսել թէ մեր  
եկեղեցական իշխանութիւնը մե-  
ծապէս պարտադանց գտնուե-  
ցաւ թէ՛ ժողովրդեան և թէ՛  
կառավարութեան առաջը : Այ-  
սու ևս այս երկուքին ալ ա-  
ռաջը պատասխանատու կ'հա-  
մարուի՝ քրիստ. զինուորադու-  
թեանը խնդրոյն վրայօք , յոյն  
ժողովրդեան մէջ տեղի ունե-  
ցած թէ՛ այդ ցուալի սխալ  
հասկացողութեանցը և թէ՛ կը-  
րօնական խղճերնուն յուզմանը  
կ'հաւատեն սակայն , ինչ  
պէս կրնէ թրաքի , թէ Յունաց  
Պատրիարքը կարգադրեր է Բ.  
Դրան հետ զինուորադութեան  
քանի մը կարգի անձանց բա-  
ցառութիւն համարուելու խն-  
դիրը : Բայց երբ այդ զինուոր-  
ները քաղաքային բանակին  
ծառայութեանը պիտի յստկա-  
նան , որոյ պաշտօնն է գտնը-  
ուած տեղը մինակ պահպանել ,  
կարծեմք թէ այդ բացառու-  
թեանց խնդիրը երկրորդական  
խնդիր մնէ : Եթէ այդ բացա-  
ռութեանց նպատակն է ընտան-  
եաց միակ փոստկուսողներն ու  
հայրերը զինուորական կրթու-  
թենէ ազատ պահել , աւելի  
ևս պարտաւոր չէ՛ր Պատրիար-  
քը կարգադրել Բ. Դրան հետ  
միւս զինուոր առնուելիք անձանց

զինուորական եղանակն ու կըր-  
թութիւնն ընելու օրերին , որ-  
պէս զի գործադրք իրենց աչ-  
խատութենէն ու վստակէն չը  
չրկուին : Բացառութիւններէն  
աւելի նախադաս համարելի  
ուրիշ կարեւոր կետեր ու խն-  
դիրներ չ'լայլին արդեօք :

Բարեբաղդաբար Պատրիար-  
քին չըրածր Բ. Դուռն ինքը ը-  
նէ պիտի : Արդէն յանձնաժո-  
ղով մը անուանած է , որ պաշ-  
տօն ունի խորհրդակցելով որո-  
շել քրիստոնէից մէջ զինուորա-  
գրութեան որոշման գործադ-  
րութեանը եղանակն ու պայ-  
մանները : Բ. Դուռն ասկից զատ  
որոշեր է - Եթէ ստոյգ է ա-  
ռած տեղեկութիւնիս - թէ  
այդ որոշումը չպիտի գործադ-  
րուի , մինչև որ սոյն պայման-  
ները պարունակող յանձնաժո-  
ղով չ'լինելիք նոր կանոնադ-  
րութիւնը հրատարակուի :

Կ'սիրեմք հաւատալ թէ  
յանձնաժողովն այն նկատողու-  
թեան պիտի առնու ըստ ամե-  
նային՝ քրիստոնեայ ժողովրդոց  
զգացումներն ու փափաքը ,  
զորս ջանացինք ցոյց տալ կա-  
րելի եղածին չափ հաւատար-  
մաբար , սոյն համագումար թէ՛  
տէրութեան և թէ՛ ազգին ա-  
ռաջը մեր անհրաժեշտ պար-  
տականութիւնը կատարած կըլ-  
լամք :

### ՔԱՂԱՔԱԿԱՆ

#### ՏԱՃԿԱՅՏԱՆ և ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Նայէ Ֆրայէ Բրէնէ թերթը՝  
միջնորդութիւն խնդրելու հա-  
մար Սէրվէր բաշայի օտար տէ-  
րութեանց իրկած շրջաբերա-  
կանին վրայօք խօսելով , Բ. Դը-  
րան սոյն հաշտարար ընթաց-  
քին պատճառներն ու քաղա-  
քական կացութեան մոտ չորս  
շրջանը հետեւեալ կերպով կը  
գնահատէ :

Ամսոյս Աին կըսէ վերոյիշ-  
եալ թերթը , Լոնտրայի մէջ  
դուամարտած պաշտօնէից ժողո-  
վին մէջ , Լորտ Տէրպի Սէրվէր  
բաշայի իրկած մէկ ծանուցա-  
դիրը կարգաց , որն որ հաշ-  
տութեան սկզբնաւորութիւն մը  
կրնայ նկատուիլ : Այս ծանու-  
ցագիրը՝ Բ. Դրան Եւրոպիոյ  
միջամտութիւնը ընդունելու  
արամադիր ըլլալը ցոյց կուտայ :

Հեռագիրը այդ ծանուցագ-  
րին մէկ համառօտութիւնը  
Լոնտրայէն հաղորդած ըլլալով  
մեզ , կրնանք դորա ինչ լեզուով  
գրուած ըլլալուն վրայ վերի  
վերոյ դադարեալ մը տալ մեր  
ընթերցողաց :

Սէրվէր բաշայի շրջաբերա-  
կանը նախ և առաջ ցոյց կ'տայ  
թէ Բ. Դուռը ձեռքէն եկածը  
ըրաւ պատերազմին առաջին

առնելու համար : Յետոյ պա-  
տերազմին նպատակը քննելու  
եղելով , կ'հաստատէ թէ ըստ  
պաշտօնական յայտարարու-  
թեանց՝ այդ նպատակը միմիայն  
Սուլթանին քրիստոնեայ հպա-  
տակներուն վճակին բարու-  
քումն է , բարեօքում մը՝ զոր  
արդէն Սահմանագրութիւնը ա-  
պահոված է , և որ չկրնար ի-  
րականութիւն գտնել քանի որ  
պատերազմը բարենորոգմանց  
գործադրութիւնը կարգիլէ ,  
Ուրեմն բարենորոգմանց խոչըն-  
դողը պատերազմը եղած է ,  
և եթէ անկեղծօրէն իր նպա-  
տակին հասնիլ կ'ուզէ Ռուսիա ,  
պէտք է որ ամենէն առաջ հաշ-  
տութիւն կնքէ : Ռուսիա կըր-  
նայ ընել զայս դիւրաւ , որով  
հետեւ երկուստեք զինուորական  
պատիւը փրկուած է , որով  
հաշտութիւնը երկու պատե-  
րազմողաց ալ վնաս չպիտի հաս-  
ցնէ : Թուրքիա դեռ ուժաս-  
պառ ըլլալէ շատ հեռի է ,  
շատ միջոցներ ունի դեռ իւր  
ձեռքը , և իր անկախութիւնն  
ու ամբողջութիւնը պաշտպա-  
նելու համար ամենամեծ զոհո-  
ղութիւններ ընելու պատրաստ  
է , բայց ինքը արեան հոսման  
փախճան մը տալ կ'փափարի ,  
և սոսոր համար ալ մեծ տէրու-  
թեանց արդարասէր զգացմա-  
նը կ'դիմէ :

Օսմ. կառավարութիւնը՝  
սոյն ծանուցագրով դեպքանա-  
գէտներուն դուռ մը բացած է ,  
ուրկէ այդ պարօնները ներս  
մտնելու են : Վիեննայի ինչպէս  
նաեւ Լոնտրայի մէջ խիստ կը  
վախցուի որ Թուրքիա ուղղակի  
Ռուսիոյ հետ առանձնակի հաշ-  
տութիւն մը չ'կնքէ , և Անարա-  
սի կոմսն ալ միշտ կ'ապահովէ  
թէ Աւստրիոյ ազդեցութիւնը  
բանակցութեանց պահուն մեծ-  
կակ դեր մը պիտի խաղայ :  
Բայց ահա Օսմ. ծանուցագի-  
րը այս ազդեցութիւնը ապա-  
ցուցանելու համար յարմարա-  
գոյն առիթ մը կ'ընծայէ : Բ.  
Դուռը միջնորդութիւն կ'ընդ-  
րէ , զոր պարտին յանձն առ-  
նուլ տէրութիւնը : Աւստրիա  
շատ պիտի զղջայ վերջը , եթէ  
ինչպէս Թայմիլ Բարիզի թերթ-  
թակիցը կ'կարծէ՝ հիմակուքնէ  
միջնորդութեան նախաձեռ-  
նարկ չըլլայ , կատարեալ յաջո-  
ղութիւնը միջամտող տէրու-  
թեանց ճարտարութենէն ու  
ազդուութենէն կախումն պիտի  
ունենայ , և մեր կարծիքը այն  
է թէ նախ և առաջ ինչ որ ալ  
ըլլայ Եւրոպիոյ հանգստութիւն  
և խաղաղութիւն տալ փորձե-  
լու է առանց կանխաւ գիտնալ  
ուղեղութիւն թէ պիտի յաջողի՝ մի  
այդ :

Միջնորդութիւնը մեծ կա-

րի որութիւն մ'ունի , որովհե-  
տեւ ատի բնական ճարտար մ'է  
Ռուսիոյ պահանջողները իմ-  
նալու համար , մինչև հիմայ ,  
այդ մասին առաջական թերթե-  
րուն և Կ. Պոլսոյ թղթակիցնե-  
րուն զրաժները միայն կան մեր  
առջն : Բայց այս տեղեկու-  
թիւններն ալ արեւմտ չ'իթ են  
որ մարդ աղէկ մը չկրնար հա-  
կընայ թէ Ռուսիոյ տառապիկե-  
լիք պայմանները որոնք են :

Եթէ ահարկութիւնը միջամ-  
տութեան առաջարկութիւնը  
բնութենով Ռուսիոյ կառավա-  
րութեան հարցնեն թէ ինչ  
պայմանաւ հաշտութիւն ընդու-  
նելու տրամադիր է , Կորչաքօֆ  
իշխանը ախտաւ հարկաւ իւր  
կամքը պիտի բացայայտէ : Այն  
ատեն պիտի գիտցուի թէ մին-  
չև ո՞ր աստիճան իւր անշահա-  
սիրութեան խոստումը բռնելու  
միտք ունի Ռուսիա , և թէ  
Չարի կ'ընէ՞ դեռ արդեօք Լիւ-  
վաւի մէջ Լորտ Լօֆթիսի  
տուած այն ապահովութիւնը  
թէ եթէ Պալկարիա մանկու  
ստիպուի ալ նէ ինքը , դարձ-  
եալ ետ պիտի քաշուի :

#### ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լրդրում 18 դեկտմ. Տես ե-  
լով որ Տէվէպոյնույէն անցնիլը  
անկարելի է , Ռուսը բառէն  
դաշտին ետեւէն դառնալով 15  
մըն հեռաւորութեամբ էրդ-  
րումի հիւսիսային արեւելեան  
կողմը և Լրդրումի դաշտին  
ծայրի Կէօշը անուն գիւղին  
վրայ արող բարձանց մօտերը  
գտնուած Պէրգայ գիւղէն ըս-  
կըսան ճանապ մը չինել : Տէվէ  
պոյնույի մէջ գտնուող առաս-  
կան յառաջապահները ետ քա-  
շուեցան : Տէրվուկասօֆ զօրա-  
պետը Պայագիտը թողլով երե-  
ւան մօտաւ Սոյն զօրապետին  
բանակին մէջ հիւանդութիւնը  
ճարակած է :

Լոնտրա 20. Կլօպ թերթը՝  
Խորհրդարանին բացմանը վրայ  
խօսելուն առթիւ կըսէ թէ ,  
անդղիական կառավարութիւնը  
Պ. Բրուսի և Լորտ Տէրպիի  
գծած քաղաքականութենէն չը  
պիտի շեղի :

Թէպէտ , կըսէ մինոյն թեր-  
թը , Ռուսիա յայտարարեց թէ  
յոյ մարդասիրութեան համար  
սոյն պատերազմը հրատարակած  
է : Անդղիոյ կառավարութիւնը կը  
կարծէ թէ Չարը՝ իր ըրած դո-  
հողութեանց փոխարէն բան մը  
պահանջելէ ետ չպիտի կենայ :

Սակայն Ռուսիոյ տրուելիք  
փոխարինութիւնը պէտք չէ որ  
մեր շահերուն դպի , այդ է ա-  
հա Անդղիոյ դիտած կէտը :  
Եթէ կարելի ըլլայ Անդղիա խա-  
ղաղութիւնը պիտի պահպանէ :

և սրբէն իւր քաղաքականութիւնն ալ այդ է: Եւսկայն աւարտ հետ միասեղ Հնդկաստանի ճանրուն դպելու չգար: Ազգին ընդունած սոյն քաղաքականութիւնը հարկաւ խորհրդարանին կողմանէ ալ ընդունելութիւն պիտի գտնէ:

Օրշովս 20: Սքոպէլէֆ զօրապետը իւլիանի կառավարչի իսկ Ռանինի զօրապետն ալ այդ քաղաքին հրամանատար կարգուեցաւ: Ռուսք ըսթաթարիքաւ, թէմիլիօլիին և փիլիսան գիրքերը թողելու հարկադրուելով կարքօ զօրապետը Արապ քիլիսէի մէջ քիչ մը պահակազօրք թողլով ինք ալ էթքօրօք քաշուեցաւ:

—Էրզրում 20: Կիւնէք գիւղը այրելու համար Մուսթար բաշայի ձեռք առած ազդու միջոցները ուստաց բոսնը աւրեց: Ռուսաց միտքն էր դաշտը պաշտօնելով ինք մը գիւղերուն նոյն դաշտին հետ ունեցած հազարդակցութեան թելը խզել: Ռուսաց ամբողջեանց վրայ յարձակիլը շատ դժուար կ'երևի: Ռուսք պաշարի և չոր խոտի պակասութիւն կ'կրեն:

—Պուքրէշէն կ'հեռագրեն թէ Բլէշնայի մէջ ռուսաց զօրաւած 77 թնդանօթներէն 25ը թուանիա զոկուեր են: ասոնցմէ զատ ուրիշ 23 թնդանօթ ևս գտնուեր է Բլէշնայի մէջ, զորս Օսման բաշա հողին տակը թաղել տուեր է: Իսկ հրամանատարը բոլոր գտնուած գրոշակներն այրել տալուն համար, մինակ մէկ զրօշակ մը ռուսաց ձեռքն ինկեր է: Գերի բռնուող օսմանիներէն 3 բաշա և 10.000 զինուոր թուանիոյ մէջ բնակեցնել որոշուեր է:

—Տէլի թէլէկրաֆի հրատարակած մէկ հեռագիրը կըսէ թէ Լօրիս Մէլիքօֆ զօրապետը Տաղիսթանի ապստամբութիւն զսպելով 24 գիւղի բնակիչներն Սիպէրիա աքսորեր է:

—Վիէնայի Բրէսէ թերթը կըսէ թէ թօթլէպէն զօրապետը Բլէշնայի պաշարման գործողութեանց վրայ գաղղլեղուաւ տետրակ մը պիտի հրատարակէ եղեր:

Լոնտրա 22 գիտմ: Պուքրէշէն քաշուած հեռագիր մը կըսէ թէ գիտմ: 18ին Պուլկարիոյ և Բուսանիոյ մէջ խիստ սոսկալի փոթորիկ մ'երաւ: Վախ կայ եղեր որ հարիւրաւոր օամ գերիներն ու հսկողութեան համար անոնց ուղեկցող ռուսական զօրքերն ճանքան փոթորկին բռնուելով սառած մնացած չըլլան: Պուքրէշի մօտերը Բօթրօսէի կարավան մը դաւնուեր է: 40 ձի և 29 մարդ ջրէն մեռեր են:

—Աթէնքէն կլօպի քաշուած հեռագիր մը կ'հաւաստէ թէ Լօրիսայի մօտերը ապստամբութիւն մ'երեւ և թէ 2000 ապստամբ զէնք առերեն Մահմետական ժողովուրդը փախչելու վրայ է:

—Բալ Մալ կաղէթի Պէրլինէն առած մէկ հեռագիրն ալ կ'հաւաստէ թէ Բրուրի գործարանին Ռուսիոյ համար շինելու վրայ եղած բազմաթիւ փոքր թնդանօթներէն զատ հայտն ապրպատէ 13 թնդանօթ սոյ ապրպոյն է իրեն նոյն կառավարութեան կողմանէ, որոց ամեն մէկն ալ 30.000 ռուպլի կ'նստի եղեր: Այս թնդանօթներէն 3ը տրուեր են արգէն:

Պուքրէշ 22: Բլէթրօշանի, Սիմիայի և Նիկօթի կամուրջները նորոգուեցան: Դեռ շոգենտներով Դանուբի վրայ անցու գործը կ'շարունակուի: Ձիթօլէն մինչև թրիօլա ձգուելիք երկաթուղեաց շինութիւնը ձմեռն ալ յառաջ կը տարուի:

Կ'հաւաստեն թէ մասնաւորապէս կուրքօ զօրապետին զօրքերը ձիւնէն և յրաէն տան: Զուեղու վրայ են:

Իկնաթիլի զօրապետը հոս է: Բուսնաց Բլէշնայի մէջ գերի բռնած Օսմանցոյ թիւը 6 հազար է: Գերեաց բաժնուելէն յետոյ 10.000 ալ պիտի տրուի անոնց:

Թիֆլիզ 20: Քօմարօֆ զօրապետին հրամանատարութեանը տակ գտնուող զօրաբաժին մը ամսոյս 17ին փոքր կռուէ մը յետոյ Արտանուշը առաւ:

Էրզրում 20: Ռուսք կ'շարունակեն զօրք համախմբել Ուղուն-Ահմէտի մէջ, որն որ Էրզրումի հիւսիսային արեւելեան կողմը 7 միլիոն հեռաւորութեամբ գիւղ մնէ: Թրքաց ֆէօքթը սյրելէն ի վեր այդ կողմերը ամեն բան խաղաղ է: Խաղաղ զօրապետը մը Օլթին գրաւեց:

Էրզրում 20: Օսմանցիք կէօքթ թապէտի, թօփ տաղի և Աղի-Ղիէի գերքերը ամրացուցին: որովհետեւ թշնամին յարձակման տրամադիր ըլլալ կերևի և պատահական յարձակման մը դէմ ազդու միջոցներ ձեռք առնուեցան: Դեռ իրենց պաշարման թնդանօթները բերած չըլլալով, չկարծուիր որ Ռուսք կարենան Էրզրումը կանանաւոր կերպով պաշարել:

—Մէմօրեալ Տիբլումթիբի մէջ հետեւեալը կ'կարդամք:

Լոնտրայէն կ'գրեն մեղթէ անգղ. կառավարութիւնը առայժմ միջամտելէ ետ պիտի կենայ: Վիթթօրիա թագուհին, անձամբ խորհրդարանը պիտի

բանայ: Արդարութիւնը բացառիկ հանգամանք մը պիտի ունենայ: Բոլոր Լորտերուն և երեսփոխաններուն հրաւիրագրերը զրկուած է կարելի եղածին չափ շուտ Լոնտրա գալու համար:

Կ'կարծուի թէ Անգլիա զինուորական միջամտութիւն մը պիտի ընէ: Երբ անգամ մը վարկը քուէսը կ'էլիօլուն պիտի գրաւէ և անոր տեղը անմիջապէս ուրիշ 12000 հոգի պիտի անցնի: որոնք արգէն պատրաստ կենալու հրաման առած են:

Միւնիչն ժամանակի մէջ ալ Նարիէրի Մակտայայի հրամանատարութեանը տակ գտնուող 75 հազար անկլօ-հնդկական զօրքերը Պոմպէի մէջ պիտի համախմբուի: Վօլտէլէյ զօրապետը կ'էլիօլուն գրաւող զօրաց հրամանատար պիտի կարգուի:

### ՆԵՐԿԱՅ ԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Իրաց ընթացքը նկատելով երէկ առաւօտ հաւանական համարած էինք թէ Բ. Դուռնայս միջոցիս զինադադարի կամ հաշտութեան մը նախնական պայմանաց խորհրդակցութեամբը կ'ընթարկէ:

Դեռ երեկոյ չէր զած՝ միւս թերթերն մինչև 15 կամ 21 օրուան զինադադար մը կնքուած, և հաշտութեան բանակցութեանց ալ սկսուած ըլլալուն բերին հասուցին գործը:

Սակայն մեր տաած ստուգտեղեկութիւններն կ'հաւաստեն թէ տակաւին ոչ կ'օրջաքօֆ իշխանը պատասխաներ է Անգլիայի, ոչ պայմաններն յայտնէր է, ոչ այդ պայմաններն Բ. Դրան հաղորդուեր են, ոչ Դուռն գաւանք նկատողութեան առեր է, ոչ ալ ուէ բան մը կնքուեր է գեռ, ոչ զինադադար և ոչ այլ ինչ:

Այն 5 պայմաններն, զոր երէկ յառաջ բերած էինք, վիէնայի թերթերուն մէջ կ'տեսնուէր, իրրև հաւանական պայմաններ Ռուսիոյ կողմանէ առաջարկուելիք, իսկ իրաւունք ունիմք հաւատալու, ինչպէս կ'ըզաջնէինք մեր երէկուան Տեսութեանց մէջ, թէ կ'օրջաքօֆ իշխանին պահանջումները քիչ մ'աւելի ծանր պիտի ըլլան, թէ Բուսնուքէն զատ Էրզրումն ու Պաթման ալ իր ձեռքը յանձնուիլը պիտի ուզէ:

Միւս կողմէն լուր կ'ուտան թէ Անգլիոյ խորհրդարանի արտօնօք գումարման հրաւիրելուն նպատակն է եղեր ոչ թէ պատերազմական ծրագիր մը որոշել, այլ առաջարկութիւն մը ներկայացնել, որով Անգլիա ըստ

տակով ծախու պիտի առնէ եւ յեր Բ. Դրանէն իզիպտասի գերիշխանութիւնը, և այս մասին Պոլիթանն ու խորհիմն արգէն իրենց հաւանութիւնը տուեր են եղեր:

Այս մասին պիտի խօսինք: Լոնտրայէն երէկ Հալօսի հասած հեռագիր մը, որ երեկոյին Բ. Դրան հաղորդուեր է, կըսէ թէ գործաւորներէ բաղկացեալ ամբոխ մը մեծ ցոյց մը բերի է պատերազմ կուզենք պօռայով: Յիշեալ հեռագիրը կ'հաւաստէ նաեւ որ խորհրդարանը եթէ մեղծ է իրմէն ուղուելիք պորքով: Ժախք քուէարկել, կառավարութիւնը պիտի լուծէ եղեր խորհրդարանը:

Կ'հաւաստեն թէ կուրքօ զօրապետը 30.000 հոգիով Սքոպիայուց հետ միանալէն յետոյ, մէկ մասը Նիշը պաշարելու համար թողեր է և մնացած զօրութեամբ սկսեր է Սօֆիայի վրայ քաշել, որոյ վերայ օամ: Իշխանութիւնը Սօֆիայէն դուրս հաներ է՝ կըսուէ: զէնք գործածելու անյարմար մարդիկն ու ընտանիքները:

Ռուսաց յառաջապահներն ալ ալ մինչև Պալքաններու կիրճերն սկսեր են տեսնուիլ:

—Կրետացի 2 ապստամբ զօրապետք Աթէնքէն ենելով, հետերնին բազմաթիւ զէնք առած, յաջողեր են գաղտնաբար կրետէ մոնել: Արգէն կըլօպի քաշուած հեռագիր մը կըսէ թէ կրետէի ապստամբք Արօքօրօնա քաղաքը գրաւելու հնո Յունաստանի պաշտօնէութիւնն ալ երկու մասի բաժնուած, մէկը անյապաղ Դրան դէմ պատերազմ հրատարակել, իսկ միւսը քիչ մ'ալ գործը ետ ձգել կուզէ եղեր:

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արաք. գործնց թղթակցու թեան գիւսանապետ Համաձեան Սորգիս էֆ. Պալէայի աստիճան ստացաւ, որով Օտեան և վահան էֆ.ներու հետ աստիճանակից ըլլալու կարժանանայ:

—Օամ: Խորհրդարանի երեկի նիստին մէջ 3 առաջարկութիւն ներկայացաւ: Մէկը Մէրսին շոգենտուն գերի բռնուելուն պատասխանատուութիւնը իրու վրայ կ'իյնայ նէ՝ զանի դատաստանի ենթարկել, 2րդը. կ. Պօլսոյ բնակիչներէն առնուելիք զինուորները պատերազմական գործողութեանց մասնակցութեանէ ազատ պահել, 3րդն ալ հաշտութեան մը համար եղած բանակցութեանց զրութիւնները խորհրդարանին հաղորդել:

Ասոնց առաջին 2ը կընդունուի, իսկ 3րդը անժամանակ ներկատուելուն համար ետ կ'ձգուի:

ՆՈՒՔՐ ԿԱՆԿԱՆՑ

ՊԱՏՆԵՐԱԶԱՐԻ

Երկարիւրեաց

Ն. Կ. Պէլլիպի

Արտեստանդէտ և աշխատանքի  
հանձնարար անցնող և արհեստագործ  
որ 80 երեւոյթ արհեստագործ լաւ թըղ-  
թի վրայ մոտաւոր ապագայութեան  
46 քանոն փորձարարական պատկերներ  
բով և 165ն աւելի ծաղկազարդութեամբ  
զարդարեալ գրքով մէկ, այլևայլ  
օգտակար, պիտանի, հրահանգ և  
հետաքրքրական նիւթեր, առանձին-  
խրատներ, վկայի ու գիտելիքներ կը  
պարունակէ աղու մը մօքի, դիւր-  
ամբողջի եղած առարկաներու եւ  
գողարկարաց վրայ, որն որ Կաղան-  
դի արժանաւոր ընծայ մը լաւէն  
զատ, նաև իբրև գաղափար ալ կըր-  
նայ խիստ յարմարութեամբ տղայոց  
ծառայել:

Բազմաժան աշխատութեամբ ի  
րոյն ընծայուած սոյն գրքովը գրեթէ  
ճիշդ կը համարուի իւր այնքան դիւ-  
րագին աշխատութեան նայելով որոյ  
պէր կազմակերպի գինն է 100 փր-  
մէճիտ դրամ, իսկ ուրիշ գրքով մէկ  
քառու մօտ, որոյ մէկ յաւելումս  
կան ուրիշ գրքով և գունաւոր պատկեր  
մն ալ կը գտնուի:

Կը ծախուի իւրոր հոյ գրավա-  
նաւան խանութիւն:

ՕՐԱՑՈՅՑ

ՊԱՐԶ ՆԻ ԸՆԴԱՐՁԱԿ

1878

ԹԱԽԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

յօժիւր յօժիւր յօժիւր

ԽԱՐԱԿԱՆԻ

Պարտականութիւն Ընդարձակին  
Օրացոյց պարզ — Ազգ. հոգե-  
ւոր դուռ, և ընդհանուր ժողով —  
Ազգ. վարչութիւն կրօնական և  
Փաղաքական ժողով, — Ազգ. դա-  
նադան ժողովը, խորհուրդը և հո-  
գաբարձութիւնը. — Սկիզբն Օսմ.  
Տէրութեան. — Օսմ. կայսր և կայ-  
սերագունը. — Բարձրատեման Նա-  
խարարը Տէրութեան. — Հայազգի  
պաշտօնատարք ի. Բ. Դուռն. — Թիւ  
մարդկան ընդ ամենայն երեսս երկ-  
րի. — Թիւ Ազգիւ Զայոց. — Սր-  
ժէքը զրամոց դանազան ազգաց. —  
Մշտնջենաւոր Աղիւսակ գիւտի ա-  
ւուրց ամսամտի. — Համեմատու-  
թիւն կերպիւր և Տնակատանի ժա-  
մուց և բաւելի:

Կը ծախուի իւրոր գրավաճառաց  
ք. Վ. — Պարզը 60 փր. Ընդարձակը  
7 ըն.

ԹԱՏՐՈՆ

ԱՐԱԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ

ԲԱԶՄԱՊԱՏՆԻՐ

Տղայոց ընթերցանութեան յատ-  
կացեալ այդ հանդէմսը որ ազնիւ  
թղթով վրայ բազմաթիւ պատկերնե-  
րով գեղեցիկ և վերնուշ տպագրու-  
թեամբ իւրոյ ըծայուած է, կը  
պարունակէ բարոյական հրահանգիչ  
և գողարկար նիւթեր:

Սոյն գործոյ տարեկան 24 թեր-  
թերը ամբողջապէս կազմուած, Կա-  
ղանդի նուէրի համար ամենէն յար-  
մար և պատուական առարկայ մ'ը-  
լալով, սոյն նակատակին ծառայեցը-  
նելու համար ալ գործոյն ստուա-  
լութեանը նայելով գինը ամենաշն-  
չին գումարի մը՝ այն է 1 ֆրանք 50  
սանդիմը կամ որ նոյն է 6 զրշ մէ-  
ճիտից գրամի իջած է, և կը ծախ-  
ուի Փարիզու գրատունը և ամեն  
գրավաճառաց քով:

ՄԵԾՄՈՒՍՅԸ ՄԱՆԿԱՆՑ

ԳՏՆՈՒԱԾ

ՈՒ

ՓԱՆԱՍԷ

Կոչուած ցաւի դեղը բո-  
լորովին բուսեղէններէ բաղադ-  
րուած ըլլալով թէ՛ ներսէն և  
թէ՛ դուրսէն կ'գործածուի ու  
բազմաթիւ ցաւեր ու հիւան-  
դութիւններ շուտով կը բժը-  
կէ, ինչպէս որ վարը յիշուած է:

Ամեն տեսակ Գոլի, Լս-  
տամոքսի, մէջքի կամ Աղիք-  
ներու ցաւեր. ու նաև Թանձր,  
Քօլէրա և այլ ամառուան հի-  
ւանդութիւններ ունեցողները  
այս դեղէն խմելու են հետեւ-  
եալ կերպով. Կէս դաւաթ ջու-  
րի մէջ, դիր ապուրի դրգա-  
լէն աւելի շաքար, վրան լե-  
ցուր անուշի դրգալ մը Փա-  
նասէ՝ աղէկ մը խառնէ ու  
խմէ:

Կոկորդի հիւանդու-  
թեանց, և Ուռեցքի համար  
դեղը վերոյիշեալ կերպով  
պատրաստէ ու ժամը կամ եր-  
կու ժամը հեղ մը մէկ կամ  
երկու անուշի դրգալ այն  
բաղադրութենէն խմէ: Բոգա-  
ցաւի ըրմամբիւմ, Ուրքի ցա-  
ւի, Ստամոքսի ու տեսակ  
տեսակ կուրակի ցաւերու հա-  
մար դուրսէն Փանասէ քսելով  
աղէկ մը չիւելու է: Ակուայի  
ցաւի համար քիչ մը բամպակ  
Փանասէի մէջ թաթխելով ցա-  
ւած ակուային վրայ դնելու է:  
Ամեն ատեն երբոր ցաւի  
մը համար դուրսէն Փանասէ  
քսել հարկ ըլլայ, եթէ քիչ  
մ'ալ խմուի աւելի շուտ բը-  
ժըղկութիւն կըլլայ:

Մարմնոյն այրուած կամ  
ճմուռած տեղերը բժշկելու  
համար վտանգը պատահածին  
պէս Փանասէն վրան աղէկ մը  
լեցընելու է: Դանակով և շն.  
կտրուած վերքերը բժշկելու  
համար արեւը չի որբած շու-  
տով մը վէրքը կապելու և կա-  
պին վրայէն Փանասէ լեցնելու  
է մինչեւ որ լաւ մը թըղի:  
Փանասէ նաև արեան չրջանը  
կարագացնէ ու բոլոր բնու-  
թիւնը կը զօրացնէ:

Այս դեղին օգտակարու-  
թեանը վրայ երկարօրէն գրեւ  
աւելորդ կը համարեմք. գոր-  
ծածողները զայն միշտ կը դո-  
վեն, ուղղը կընայ անձամբ  
փորձել. գինն աժան է: Կը  
ծախուի Մինասեան և Ընկե-  
րաց Սմիթեան վաճառատու-  
ները ի Ղալաթիա Կ. Պօլսոյ:

ՆԱԽՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԸՍՏ ՎԱՐԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ  
Ս. ԵԿԵԼԵՑԻՈՅ

Ի ՊԵՏՈ ՆԱԽ ՎԱՐԿԱՆ ԴԱՍՈՒՑ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆԱՑ

ԿՐԹԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԸՍՏ ՎԱՐԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ  
Ս. ԵԿԵԼԵՑԻՈՅ

Ի ՊԵՏՈ ԶԱՐԿԱՅԵԱՆ ԴԱՍՈՒՑ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆԱՑ

ՅՈՐԴԵՆԱՅ

Տ. ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ ՊԵՑ

Առաջադիւրսքը եւ Վաւերացմանը  
ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ.

Տպագրեալ Հրատմամբ

Տ. ՆԵՐՍԻՍԻ Ս. ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՈԼՍՈՅ

Կը ծախուի գրավաճառաց խա-  
նութեանը:

Ի Գ. Ի Ն

Նախնական Քրիստոնէական 80  
կրթական Քրիստոնէական 80  
Կեդրոնականութիւն է Փարիզու գը-  
րատունը. Զաքարիա — Յակոբ-  
եան խան թիւ 15:  
Դպրոցաց համար մեծ քանա-  
կութեամբ գեղեցիկներէ հարիւրէն 10  
դեղը պիտի ըլլայ:

ԹՈՐՈՍ ԼԵՒՈՆԻ

ԳՐԵԱՑ

ՄԵՐԵՆԵՑ

Սոյն գեղեցիկահիւս վիպասա-  
նութենէն՝ որոյ պատմական աղբիւ-  
րը Ռուբինեան հարստութենէն առ-  
նուած է, և որ Քսի. 1148 թուա-  
կանին՝ Հայոց Կիլիկիոյ մէջ վերս-  
տին ձեռք բերած իշխանական մե-  
ծութեան հզորտախալ պատկերն է,  
ամեն Հայ պէտք է փութայ մի օ-  
րինակ ունենալ:

Կը ծախուի ամեն գրավաճա-  
ռաց քով:

Գին 2 ֆրանք

ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՆԴԵՍԻ

ԱՐԱՐԶԱԳԱՐՏՈՒԹԵԱՆ

ԱՍՏՈՒԾՈՅ

ՊՕՂԱՍ Պ. ՔԵՐԵՍԵՃԵԱՆ

Զրգ. տիպ.

Գրք. Առնալու Ընթերցանութեան

Սոյն գրաբառ երկարութեան  
ստալին տպագրութիւնը իր ահաւ  
ոճոյն և գողտրիկ իմաստիցն համար  
կ'աղանդի նուէր և մրցանակաբաշ-  
խութեան մէկ հատիկ պարգև հա-  
մարուած և արդէն սպառած է: Այս  
անգամ Ն. Բարձրաշնորհ օրբազնու-  
թեան անուամբը հովանաւորեալ  
Արամեան մաքուր տպագրութեամբ  
և թարգմանչէն խնամք ուղղեալ  
կրկին իւրոյ ընծայուի, այնու քաղ-  
ցըր ակնկալութեամբ որ անշուշտ

սոյն տիպն ալ առաջնոյն բաղդին  
պիտի արժանանայ:

Գինն է 5 ֆրանկան ողջ թըղ-  
թադրամ: Կեդրոնականութիւն է Քար-  
գու գրատունը, Զաքարիա Եւս-  
տիւս Գողտրեան խան թիւ 15, և  
կը ծախուի իւրոր հոյ գրավաճառաց  
քով: Դպրոցաց համար ստանաւոր  
դեղը կըլլայ:

ԽՈՐՀՈՒՐԴ ԿՂԶԻ

ԸՆԴԱՐՁԱՐԿԱՆ

Ժիւլ Լէէրն անուանի Հեղինակին  
սոյն հետաքրքրաշարժ և հրահանգիչ  
գործին երկրորդ հատորն ալ իւրմի-  
րէն հատած ըլլալով, կը ծախուի  
կէնի—ձամբ Զիլինկիլէր հատաւէսի  
թիւ 5. Ս. Պ. և Կազմաճեան գը-  
րատունը և ուրիշ գրավաճառաց քով  
Գին 2 ֆրանք:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԼԱՆ  
ԶԱՆԱՆ ԵՒ ՓԱՌՆԱՆ Ա.

Գրք. Սիւրբ Գրքի Գործնական

Ընթերցատեղի ազգայինը որ ան-  
շուշտ ազգային տաղանդաւոր հեղի-  
նակին «Անուշաւանը» և այլ գործե-  
րը կ'ընեն, մեծ հաճութեամբ պիտի  
կարգան այս նոր գործը որ դարձ-  
եալ մեր ազգ. պատմութենէն առ-  
նուած է:

Կ'ծախուի Ս. Պ. և Կազմաճեան  
գրատունը կէնի—ձամբ Զիլինկիլէր  
հատաւէսի թիւ 2 և ուրիշ գր-  
ռաց քով:

Գին 1 ֆր. 50 սանդիմ

Հարաւորա ՌՅ. 18 Դեկտ.

ԸՆԴՈՒՐ. ՊԱՐՏ. ԱՐԺ.

|              |        |
|--------------|--------|
| Բաց          | 09.22  |
| Գոց          | 09.33  |
| Բարձր գին    | 09.34  |
| Ցած գին      | 09.47  |
| Թղթագրամ բաց | 244.00 |
| բարձր        | 240.00 |
| ցած          | 238.00 |
| Ժամը 11      | 242.00 |

|          |          |
|----------|----------|
| Փոխ. 63ի | Ֆր. 42.— |
| » 65ի    | » 45.—   |
| » 69ի    | » 40.—   |
| » 73ի    | » 40.—   |

|                 |      |
|-----------------|------|
| Գանձատու        | 16.— |
| Սօսիթէ Ժէնէրալ  | 3.—  |
| Սօսիթէ Օթօման   | 2.10 |
| Պանք տը Բօնաթ.  | 3.02 |
| Գրէտի Ժէնէրալ   | 3.—  |
| Թրամվէյ         | 0.80 |
| Բուս. Երկաթուղի | 26.— |

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

(Օսմ. 1900 տ. 1 հոլ—1)

|              |        |
|--------------|--------|
| Սնդը ոսկի    | 109.02 |
| Գաղը »       | 86.30  |
| Բօլ          | 88.30  |
| Քարպօն արծաթ | 16.20  |
| » թղթագրամ   | 10.25  |
| Գրքմից       | 51.—   |
| Հինգնոց      | 21.20  |
| Մէթալիք      | 21.20  |
| Ճերմակ մէճիտ | 6.15   |
| Պղինձ        | 185.—  |

ՍԱՀԻՊԸ ԻՄԹԻԱԶ

ՊՕՂԱՍ ՔԵՐԵՃԵԱՆ

Բերլինացի բաղադրեալ իր-  
սի խանըն գարշուսընտա Պա-  
քըր սօքաղը Ն. 12: